

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԿՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ասատրյան Գայանե Միհրարի

ՅՈՒՐԱՅԻ ԵՎ ԱՏՈՐԻՆ ԿԱՎՃԻ ՀԱՍԱԿԻ ՈՒԴՈՒԼԱՐԻԱՆՆԵՐԻ ՀԱՅԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ԿԵՆՍԱՇԵՐՏԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ
ՕՖԻՈԼԻԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ

Ի՞՞.01.01-՝ “Ոեղիոնալ երկրաբանություն, երկրատեկութովիկա, հնէաբանություն և շերտագրություն”
մասնագիտությամբ երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
առենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2011

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ ГЕОЛОГИЧЕСКИХ НАУК

Асатрян Гаяне Мхитаровна

ПАЛЕОНТОЛОГИЧЕСКИЕ И БИОСТРАТИГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ
ЮРСКИХ И НИЖНЕМЕЛОВЫХ РАДИОЛЯРИЙ ОФИОЛИТОВЫХ КОМПЛЕКСОВ
АРМЕНИИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата геологических наук по специальности
24.01.01 “Региональная геология, геотектоника, палеонтология и стратиграфия”

ԵՐԵՎԱՆ-2011

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Երկրաբանական
գիտությունների ինստիտուտում

Գիտական դեկան՝ Երկրաբ.-հանք. գիտ. դոկտոր Մ.Ա. Սարիան

Պաշտոնական ընդրիմախոսներ՝ Երկրաբ.-հանք. գիտ. դոկտոր Յ.Վ. Սայազյան
Երկրաբ.-հանք. գիտ. թեկնածու Ա.Գ. Գրիգորյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Պետական Համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2011թ. օգոստոսի 29-ին, ժամը 13:00

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական Գիտությունների Ինստիտուտի

0. 54 մասնագիտական խորհրդում

Հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բագրամյանի պող. 24 ս.,

e-mail : hrshah@sci.am

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ ԵԳԻ գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2011 թ. հուլիսի 23-ին:

0.54 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

Երկրաբ.-հանք. գ. թ.

 Հ. Վ. Վարդանյան

Тема диссертации утверждена в Институте геологических наук НАН РА

Научный руководитель, доктор геол.-мин. наук М.А. Сатиан

Официальные оппоненты

доктор геол.-мин. наук Ю.В. Саяян

кандидат геол.-мин. наук А. Г. Григорян

Ведущая организация

Ереванский Государственный Университет

Зашита диссертации состоится 29 августа в 2011 г. в 13:00 ч. на заседании

Специализированного совета 054 Института геологических наук НАН РА.

Адрес: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 а.

e-mail : hrshah@sci.am


С диссертацией можно ознакомиться в библиотеке ИГН НАН РА

Автореферат разослан 23 июля 2011 г.

Ученый секретарь Специализированного совета 054,

кандидат геол.-мин. наук

Г. В. Шагинян



ՆԱԽԱԲԱՆ

Աշխատանքի արդիականությունը: ՀՀ տարածքում գոնվող օֆիոլիթային համայնքի հասակը, ի թիվս երկրաբան-կառուցվածքային, քարաբանա-շերտագրական և մի շարք այլ հարցերի, կարևոր է Փոքր Կովկասի երկրաբանական զարգացման պատմության վերականգնման համար: Օֆիոլիթների բնույթը, ծագումը, ձևավորման վայրն ու երկրադինամիկ պայմանները մինչ օրս տարբեր կերպ են մեկնաբանվում, հետևաբար դրանց ուսումնասիրությունը շարունակում է մեալ գիտականների ուշադրության կենտրոնում: Այս կարևոր է Տեղիս ավազանի հնաշխարհագրական և երկրադինամիկական պայմանների վերականգնման և հարակից տեղամասերի հետ համահարաբերակցության համար՝ պայմանավորված Ալպ-Հիմալայան գրտում Փոքր Կովկասի գրաված դիրքով:

Մայիսարիանների կենսաշերտագրական ուսումնասիրությունները կարևոր են և արդիական ՀՀ տարածքում գոնվող օֆիոլիթային համայնքի հրաբխանատվածքային հաստվածքների հասակների որոշման համար, քանզի, ժամանակի ընթացքում, ուսումնաբանների ուսումնասիրության լաբորատոր մեթոդների և սարքավորումների կատարելագործմանը զուգահեռ, փոփոխվել, ճշգրտվել և համարվել է ուսումնաբանների սիստեմատիկան, դրանց կենսաշերտագրական և շահանակությունը, համաձայն որոնց և կատարվել են նոր ուսումնասիրությունները:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Այն են ախտական աշխատանքի հիմնական նպատակը ՀՀ տարածքում գոնվող օֆիոլիթային համայնքի հրաբխանատվածքային հաստվածքի հարաբերական հասակի որոշումն է՝ ըստ ուսումնաբանների ժամանակակից ուսումնասիրությունների և սիստեմատիրումների:

Կատարվել է ՀՀ տարածքում գոնվող օֆիոլիթային համայնքում՝ կայծքարային ապարներում ուսումնաբանների սիստեմատիկ կազմի և շերտագրական տարածման առանձնահատկությունների ուսումնասիրություն, շերտագրական սիստեմների մշակում և մանրամասնում՝ ըստ Տեղիս ավազանի ուսումնաբանների ժամանակակից սիստեմավորման (O'Dogherty, 1994; Jud, 1994; Baumgartner et al. (1995), Dumitrica et al., 1997; Beccaro, 2006; O'Dogherty et al., 2006; 2009 և ուր.)՝ ընդունված միջազգային կողերսին համապատասխան:



Փաստացի նյութը: Աշխատանքը հանդիսանում է 2006-2010 թթ. ընթացքում օֆիտիթսերի ուսումնասիրության հայ-ֆրանսիական համագործակցության շրջանակներում կատարված դաշտային աշխատանքների և լաբորատոր ուսումնասիրությունների վերլուծության արդյունք: Ուսումնասիրվել և նմուշարկվել են 22 տարածքի Սևանի և Վեդու օֆիտիթային գոնաների տասներկու մերկացումներ, որոնցից ութում հնարավոր է եղել ըստ ռադիոլարիաների որոշել և ճշգրտել հրաբիս-նստվածքային հաստվածքների հասակները: Կայծքարային ապարների շուրջ 50 նմուշներից լաբորատոր պայմաններում ուսումնասիրվել է 21-ը, որոնցից 18 նմուշներում հաջորդվել է առանձնացնել որոշելի ռադիոլարիաներ: Ուսումնասիրվել են մոտ 13000 ռադիոլարիաներ (զետեղված սկանավորող էլեկտրոնային միկրոսկոպի 53 նմուշների վրա): Աշխատանքում ներկայացվել է ռադիոլարիաների 69 սեռերի պատուկանող 137 տեսակներ: Լաբորատոր ուսումնասիրությունները կատարվել են Ֆրանսիայի Փարիզ 6, Պիեռ և Սարի Կյուրի համալսարանի միկրոհետարանության լաբորատորիայում, որու մանրադիտակային ուսումնասիրություններ կատարվել են Փարիզի Բնագիտության Ազգային Թանգարանի երկրաբանության լաբորատորիայում: Կիրառվել է ապարիներից ռադիոլարիաների տարանշատման բիմիական մեթոդը (Գոտրաշրածնական թթվի միջոցով), որոշումները կատարվել են ռադիոլարիաների մանրազնին ուսումնասիրությամբ, մի քանի հարյուր կամ հազար անգամ խոշորացմամբ՝ սկանավորող էլեկտրոնային միկրոսկոպների (HITACHI TM-1000, ZEISS SUPRA 55VP) միջոցով, ռադիոլարիաների մեծ խոշորացմամբ տարածական պատկերների կիրառմամբ: Նախնական դիտումները և նկարագրությունները արվել են հելիուկների միջոցով՝ պատրաստված ՀՀ ԳԱԱ ԵԳԻ-ի հղկման լաբորատորիայում:

Գիտական նորույթը:

1. Ռադիոլարիաների 110 տեսակներ առաջին անգամ են որոշվել 22 տարածքի օֆիտիթային համալիրում:
2. Առաջին անգամ հայտնաբերվել են բայոսի հասակի ռադիոլարիաների կենսահամալիրներ Վեդու օֆիտիթային գոնայում:

3. Առաջին անգամ առանձնացվել են վերին բայոս-ստորին բաթի և վերին բաթ-ստորին օքսֆորդի հարկերին բնորոշ ռադիոլարիաների կենսահամալիրներ Սևանի օֆիոլիթային գոնայում:

Հիմնական պաշտպանվող որութեար:

1. Առաջին անգամ հայտնաբերվել են բայոսի հասակի ռադիոլարիաների կենսահամալիրներ Վերու օֆիոլիթային գոնայում՝ սալիխտային բազալտների հետ հերթափոխված ռադիոլարիտներում, համաձայն որոնց Վերու օֆիոլիթային համալիրի հրաբիա-նստվածքային հաստվածքը սկսել է ձևավորվել բայոսից:
2. Հայտնաբերվել են վերին բայոս-ստորին բաթի և վերին բաթ-ստորին օքսֆորդի հասակի ռադիոլարիաների կենսահամալիրներ Սևանի օֆիոլիթային համալիրում, ռադիոլարիտներում, որոնք թույլ են տալիս առանձնացնել նույն ժամանակահատվածում ձևավորված հաստվածքները:
3. Սևանի օֆիոլիթային գոնայում մաերամասնվել է վերին տիտոն-ստորին ապտ միջակայքը. որոշվել են վերին կիսմերից-ստորին վալանժինի, վերին տիտոն-ստորին բերրիասի, վերին տիտոն-վալանժինի, վերին վալանժին/հոտերիվ-ստորին ապտի, վերին տիտոն-ստորին հոտերիվի, վերին հոտերիվ-ստորին ապտի հասակի ռադիոլարիաների կենսահամալիրներ, համաձայն որոնց ուսումնասիրված հաստվածքները ձևավորվել են համապատասխան ժամանակահատվածներում:

Աշխատանքի կիրարական նշանակությունը: Աշխատանքի տվյալները կիրառվում են Երկրաբան-քարտեզագրական աշխատանքներում և Փոքր Կովկասի հետերկադինամիկական պայմանները պարզաբնելու համար. Դրանք կարող են կիրառվել նաև օֆիոլիթների հետ ծագումնաբանորեն կապված որոշ օգտակար հանածոների (քրոմիտ, մագնեզիտ, ուլի, սնդիկ, պղինձ, մանգան, սերպենտին, ասբեստ, կենսա-ակտիվ միներալներ և այլն) որոնողական աշխատանքներում:

Աշխատանքի լուսաբանումն ու հրատարակումները: Աշխատանքը իրականացվել է ՀՀ ԳԱԱ Երկրաբանական Գիտությունների Ինստիտուտում (Հրաբխագիտության, ռեզոնանսական Երկրաբանության և լիթորզիայի բաժին) և Ֆրանսիայի Փարիզ 6, Պիեռ և Մարի Կյուրի համալսարանում (Միկրոհետաքանության լաբորատորիա): Աշխատանքի ընթացքն ու արդյունքները բննարկվել են ԵԳԻ սեմինարներում: Կատարվել են ընթացիկ տարեկան (2007-2010 թթ.) գեկուցումներ Պիեռ և Մարի

Կյուրի համալսարանում՝ դրկոսորանտներին պարտադիր տարեկան կրնքերաններում։ Հանձնվել է հաշվետվություն, զեկուցվել և ընեարկվել աշխատանքի արդյունքները և ընթացքը (2008 թ., 60 էջ, ֆրանսերեն): Կատարվել է աշխատանքի ֆրանսիական տարբերակի պաշտպանություն, ըստ Պիեռ և Սարի Կյուրի համալսարանի կանոնակարգի՝ համապատասխան Ժյուրիի ներկայությամբ (2010 թ.): Ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են նաև 2009 թ. Ֆրանսիայի Լիլ քաղաքում կայացած «Ֆրանսիական Հնէաբանական Ասոցիացիայի և Ֆրանսիական Հնարուսարանական Ասոցիացիայի 4-դ խորհրդակցություն»-ում, 2009թ. Չինաստանի Նանչժինգ քաղաքում կայացած «Խաղիուարիաների 12-րդ Միջազգային խորհրդակցություն»-ում, ինչպես նաև 2010թ. Հունաստանի Սալոնիկ քաղաքում կայացած «Կարպատ-Բալկանյան Երկրաբանական ասոցիացիայի 19-րդ կոնգրես»-ում և այլն։ Աշխատանքի վերաբերյալ հրատարակվել են չորս հոդվածներ, որոնցից մեկը՝ ՀՀԱԱ ԵԳԻ Գիտություններ Երկրի մասին տեղեկագրում, մյուսները՝ միջազգային գիտական պարբերականներում։ Հրատարակվել են նաև ինք թեզիներ, որոնցից ութը՝ միջազգային գիտական խորհրդակցությունների ժողովածուներում, ևս երկու հոդված և երեք թեզիս հանձնված են հրատարակման։

Կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է նախաբանից, վեց գլուխներից և եղրակացությունից, ընդհանուր առմամբ 167 էջ, հավելվածում գետեղված են որոշված ռադիուարիաների լուսանկարները։ Աշխատանքում բերված են 24 քարտեզներ և սխեմաներ և 14 աղյուսակներ։ Օգտագործված գրականությունը կազմում է 240 անուն։

Ընթակալություններ: Ընթակալալություններ են հայտնում աշխատանքի գիտական դեկավար, երկրաբ-հանք. գիտ. դրկուոր Ս.Ա. Սաթիանին՝ մշտական ընեարկումների և օգուակար խորհրդների համար, ինչպես նաև Պիեռ և Սարի Կյուրի Համալսարանի դրկուոր, պրոֆեսոր Տ. Դանելիանին, մասնագիտական գիտելիքների փոխանցման և առենախոսության հետ առնչվող խնդիրներում ցուցաբերած աջակցության համար։

Ընթակալալություններ են հայտնում Երկրաբանական Գիտությունների Ինսախուութիւ աշխատակազմին, Հրաբխագիտության, ուղինոնայ երկրաբանության և լիթոլոգիայի բաժնի վարիչ, երկրաբ-հանք. գիտ. դրկուոր, ՀՀԱԱ ակադեմիկոս Ռ.Տ.

Զրբաշյանին, ԵԳԻ տնօրեն, Երկրար-հանք. զիտ. դրկուոր Ա.Ա. Կարախչանյանին և ԵԳԻ փոխտնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Երկրար-հանք. զիտ. դրկուոր Ռ.Լ. Մելքոնյանին ցուցաբերած ուշադրության և աջակցության համար: Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում ԵՊՀ Ռեգիստրացիայի պատվավոր վարիչ, Երկրար-հանք. զիտ. դրկուոր, պլոֆեսոր Հ.Հ. Սարգսյանին՝ օգտակար խորհուրդների համար:

Շնորհակալ եմ Ֆրանսիայի Պիեռ և Սարի Կյուրի համալսարանի Միկրոհետաքանության լաբորատորիայի աշխատակիցներին՝ ցուցաբերած աջակցության համար, Ֆրանսիայի Նիցա-Մոնիս Անտիպոլիս համալսարանի պլոֆեսոր Ս. Սոսնին՝ աշխատանքի քննարկումների, դաշտային աշխատանքների և քարտեզագրական նյութերի վերլուծության հարցում ցուցաբերած մեծագոյն աջակցության համար: Երախտագիտություն եմ հայտնում նաև Փարիզի Բնագիտության Ազգային Թանգարանի պլոֆեսոր Պատրիկ դը Վերին՝ մասնագիտական խորհուրդների համար:

Շնորհակալություն եմ հայտնում մոլորակների մասին զիտ. դրկուոր (Ֆրանսիա, Նիցա) Դ. Գալյանին, Երկրար. զիտ. թեկնածու Լ. Սահակյանին, Երկրար-հանք. զիտ. թեկնածուներ Ֆ. Հայրապետյանին, Ժ. Ստեփանյանին, Ռ. Խորենյանին և մյուս աշխատակիցներին աշխատանքի քննարկման և շարադրման հարցում ցուցաբերած աջակցության համար:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Հայաստանում Ֆրանսիական դեսպանատան մշակույթի բաժնին՝ շնորհված կրթաթոշակի համար:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում Հայաստանում Ֆրանսիական դեսպանատան մշակույթի բաժնին՝ շնորհված կրթաթոշակի համար:

Գլուխ 1. ԽԱՌՈՒԱՐԻԱՆԵՐԻ ՈԲՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքում ռադիոլարիաներն հայտնի են սկսած Գինզբերգի (Գինզբերգ, 1929, 1930), Պաֆֆենգոլցի (Պաֆֆենգոլց, 1951), Ռենգարտենի (Ռենգարտեն, 1959) աշխատանքներից: Դրանց ուսումնասիրությունները ծավալվել են հասլապես 70-ական թվականներից, տարածաշրջանի երկրաբանների կողմից Փոքր Կովկասում հրաբխա-նսովածքային ապարների համատեղ ուսումնասիրությունների ընթացքում (Ժամօյդա և այլն, 1976, Տիխոմիրովա, 1981, Կազինցովա, Աբասով, 1981, Սատիան, 1979, 1984, Վիշնևսկայա, 1974-1975): Ռադիոլարիաների ուսումնասիրությունները նախկինում կատարվել են ապարներից պատրաստած հղուկներում, որով և մասամբ պայմանավորված են օֆիոլիթային համալիրի հրաբխա-նսովածքային հասովածքների հասակների վերաբերյալ ձևավորված սարքեր եզրահանգումները՝ մինչև 90-ական թթ. դրանք հիմնականում համարվել են վերին կավճի հասակի: Հետազոտման ՀՀ տարածքում բացահայտվել են նաև վերին յուրա-սոսորին կավճի հասակի ռադիոլարիաների կենսահամալիրներ՝ Սևանի (Վիշնևսկայա, 1990, 2002, Vishnevskaya, 1995) և Վեդրու (Կանտալիանու և այլն, 1992 թ., Բելով և այլն, 1991) օֆիոլիթային զոնաներում, ինչպես նաև վերին տրիասի և սոսորին յուրայի ռադիոլարիաների կենսահամալիրներ՝ Սևանի օֆիոլիթային զոնայում (Կնիշպեր և այլն, 1997):

Գլուխ 2. ՕՖԻՈԼԻԹԱՅԻ ԳՈՏԽՆԵՐԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի տարածքում, և առհասարակ, Փոքր Կովկասում, օֆիոլիթային գոտիների երկրաբանության ուսումնասիրությունը սկիզբ է առնում Արքիմի (1873, 1899, 1902) և այլոց (Պաֆֆենգոլց, 1959, Մելիկյան և այլն, 1967, Սատիան և Ստեփանյան, 1968, Պալանջյան, 1971, Կնիշպեր, 1975, Կազարյան, 1983, Սատիան, 1984) աշխատանքներից:

Փոքր Կովկասը հանդիսանում է Ալպ-Հիմալայան գոտու մի մասը (Ասլանյան, 1958), որը բնորոշվում է երկրաբանական կառուցների հյուսիս-արևմույան (համակովկապայան) տարածմամբ, որի կարևորագույն և բնորոշ կառուցվածքային

տարրերից են օֆիոլիթները: Թեև ՀՀ տարածքում օֆիոլիթների ուսումնասիրությունն ունի մոտ մեկորայս պատմություն, այնուհանդերձ դրանց հասակը, շերտագրական դիրքը, կառուցվածքը, բնույթը և ձևավորման պայմանները և մի շարք այլ խնդիրներ դեռ մնում են վիճակարուց, պայմանավորված ամենուրեք օֆիոլիթների բարդ կառուցվածքով և դրանց վերաբերյալ առկա տարակարծություններով: Դրանց առաջացումը և զարգացումը կապվում է Steffini օվկիանոսային ավազանի զարգացման հետ (Knipper, 1980; Dercourt *et al.*, 1986; Казмин и др., 1987, Knipper и др., 1987; Зоненшайн и др., 1987 և ուր.), ըստ այդ Փոքք Կովկասի օֆիոլիթները պատկանում են Steffini օֆիոլիթային գրոսուն և ամենայն հավանականությամբ նրա շարունակությունն է հանդիսանում արևմուտքում անատոլիական օֆիոլիթային գրոսուն Իզմիր-Անկարա-Երզնկայի ճյուղը (Knipper, 1975; Асланян и Сатиан, 1977; Knipper и др., 1987, Adamia *et al.*, 1987; Galoyan, 2008):

Համաձայն U.S. Ասլանյանի և U.U. Սարժիանի ուսումնասիրությունների (Асланян и Сатиан, 1977), Փոքք Կովկասում, ըստ իրենց աշխարհագրական դիրքի և տեկտոնական կառուցվածքի, առանձնացվել են երեք օֆիոլիթային գրոսիներ՝ Սևան-Հազարու, Վելու և Զանգեզուրի (Сатиан, 1984, 2005, 2009): Քննարկվում է հատկապես օֆիոլիթների պլոխունն (Knipper, 1975; Knipper и Хайн, 1980; Соколов, 1977, Galoyan, 2008, Sosson *et al.*, 2010), ավտոխոտն (Шихалибեйли, 1966; 1982, Сатиан, 1984) կամ պարա-ավտոխոտն (Сатиан, 2005, Сатиан и др. 2005, 2009) բնույթը:

Ներկայումս՝ երկրաբանների մեծամասնության կողմից ընդունված է առանձնացնել հետևյալ կարերագույն կառուցները.

- 1) Գունդվանական ծագման Հարավ-հայկական զանգվածը (Knipper и Хайн, 1980) հարավ-արևմուտքում:
- 2) Սևան-Հազարու (Ամասիա-Սևան-Հազարո) օֆիոլիթային գրոսին կենտրոնական մասում՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք տարածմամբ, որը ենթադրաբար ձևավորվել է Steffini օվկիանոսի (կամ այդ օվկիանոսում բացված ծայրամասային ծովի) կեղևի մեացորդներից (Пейве, 1969; Knipper, 1975; Knipper и Хайн, 1980; Соколов, 1977; Adamia *et al.*, 1980, 1981; Закариадзе и др., 1983, Knipper и др., 1986; Karyakin, 1989 և ուր.):

3) Եվրասիական պլատֆորմի հարավային ակտիվ ծայրամասը հյուսիս-արևելքու (Milanovskii, 1960; Adamia *et al.*, 1980, 1981; Avagyan *et al.*, 2005; Sosson *et al.*, 2010 և ուր.):

Հստ ժամանակակից պատկերացումների, օֆիոլիթային գոտիների ձևավորման երկրադինամիկ սխեմաների՝ համապատասխանաբար սուբդուկցիոն, օքորուկցիոն և կոլիզիոն պրոցեսների վերաբերյալ մանրամասներ քննարկվել են զանազան աշխատություններում (Adamia *et al.*, 1977, 1987; Zakariadze *et al.*, 1983, 1986; Knipper *et al.*, 1987, 2001; Lordkipanidze *et al.*, 1988; Kazmin *et al.*, 1987; Agamalyan, 2004; Դյուքս, 1990; Galoyan *et al.*, 2007, 2009; Sosson *et al.*, 2010 և շատ ուր.):

Գլուխ 3. ՕՖԻՈԼԻԹԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՎԱԾ ԿՏՐՎԱԾՔԵՐԻ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՄՈՒՄԱՐԿՈՒՄԸ, ԵՎ ՈՍԴԻՈԼԱՐԻԱՆԵՐԻ
ԼԱԲՈՐԱՏՈՐ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՎԱՐԻ

3.1 Սևանի օֆիոլիթային գոնա միջամատայի լիճամասությ մաքանակիոն սկավառական տարածքում օֆիոլիթային համայիրի ապարները իրենց տարածման ամենախոշոր դաշտով մերկանում են Սևանի լեռնաշղթայում, Սևանա լճի ավազնի հարավ-արևելյան մասում: Ուսումնասիրվել են Զորաշեն, Գեղամասար և Ավազան գյուղերին հարող տեղամասերը՝ մասնավորապես Դալիի ձորում և Սարինար գետի ավազանում մերկացող կայծքարային ապարները: Ուսումնասիրվել են մեկ մերկացում Սևանա լճի հյուսիս-արևմուտքում՝ Ձկնագետի ավազանում, որն ըստ Ս.Ա. Սարգսիանի ուսումնասիրությունների պատկանում է Զանգեզուրի օֆիոլիթային գոտուն:


3.1.1 Դալի գետի հովիտ

Օֆիոլիթներն առավել ամբողջական մերկանում են Զորաշեն-Արեգունու զանգվածում՝ շուրջ 30 կմ երկարությամբ և 1-6 կմ լայնությամբ (Knipper, Kostanayn, 1964, Knipper, 1975), որտեղ և զոնվում են ուսումնասիրած մերկացումներից երկուսը՝ Զորաշեն գյուղից մոտ 5-7 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Այստեղ շերտագրական կտրվածքի ստորին մասը ներկայացված է գերիհմքային և հիմքային

ապարներով՝ ~2 կմ հզրությամբ (Աբօվյան, 1961, Պալանդյան, 1971, Կնիպպեր, 1975): Սրանց հյուսիսային շարունակությունը, որն համապատասխանում է կտրվածքի վերին մասին, բաղկացած է բվարցային դիորիտներից և պլազմոգրանիտներից՝ դայկա-երականման մարմիններով:

Դայի գետի հովտում օֆիոլիթային համալիրում գերակշռում են բազալտային լավաները (տուեհիտային և ալկալային սերիայի), որոնց միջնամասում՝ սույն վարարահունի մեջ, մերկանում է պլազմոգրանիտային ամենախոշորը մարմինը, այնուհետև հաջորդում է (կոնտակտը միզուցե նաև տեկտոնական է) հրաբխա-նստվածքային հաստվածքը (Galoyan, 2008):

Ուսումնաժրված մերկացումներից մեկը, որը պայմանականորեն անվանվել է Դայիի մերկացում (նկ. 1), գտնվում է Դայիի ձորում՝ գետի հունի աջափնյա վարարահունի աջ ափին, տեղական ճանապարհի հարեւանությամբ 2126 մ բարձրությունում ($N 40^{\circ} 29.109'$, $E 45^{\circ} 25.314'$):



Նկ. 1 Դայիի մերկացման և նմուշարկման գծապատճերը


Հրաբխա-նստվածքային հաստվածքը բաղկացած է սպիրիտային լավաներից (MORB տիպի, Galoyan *et al.*, 2009), ծածկված մոտ 3 մ հզրությամբ ռադիոլարիտների շերտերով (բաց վարդագույնից մինչև գորշ), որոնք բնորոշվում են երեսման խոշոր շերտավոր, երեսման բրեկչիանման տեքստուրայով: Ռադիոլարիտները ծածկվում են դիաբազներով: Ռադիոլարիտային հորիզոնում առկա են նաև գորշ,

մինրա-մանուշակագույն տուֆիտների ենթաշերտեր: Մերկացումում հազվադեպ հանդիպում են կրաքարային մեծ բեկորներ: Ուսումնասիրվել են ռադիոլարիտների երկու նմուշներ (Dali-1 և Dali-2):

Երկրորդ մերկացումը (Գիյի մերկացում), Դալիի մերկացումից քաժանվում է մի փոքրիկ ձորակով՝ հարավում: Ռադիոլարիտները մերկանում են 2126 մ բարձրությունում ($N 45^{\circ} 29.071'$, $E 45^{\circ} 25.305'$): Այստեղ ռադիոլարիտները մերկանում են տեղ-տեղ փոքր ելքերի ձևով: Ի տարբերություն նախորդի, այստեղ ռադիոլարիտներն ավելի պինդ և զանգվածային են և ավելի մուգ, որը հավանաբար պայմանավորված է դրաց երկար-մանգանային կազմով:

3.1.2 Սարինարի ավազան

Սևանի օֆիոլիթային գոտում ուսումնասիրված մերկացումներից ուշագրավ է Սարինարի մերկացումը: Ակած Սարինարի հովտից դեպի արևելք (Գեղամասար գյուղից դեպի հյուսիս-արևմուտք) հետամտվում է կոնյակ սանտոնի հասակի (Խաննովլանկոտնի որոշումները ցեմենտում ըստ Karla Muller-ի, Sosson *et al.*, 2010) օլիստոստրոմը (կամ օֆիոլիթային մելանժը), որը ծածկվում է կամպան-մաստիխտի կրաքարերով (Ակ. 2), վերջիններիս վրա տեղ-տեղ վրաշարժված են օֆիոլիթները՝ հյուսիս-արևելքից, որոնք հավանաբար կոլյզիայի հաշվին ձևավորված տեկտոնական ուշ կոնտակտներ են (Galoyan, 2008):




Ակ. 2 Սարինարի երկարանական կտրվածքն ըստ Մ. Սոսոնի (Asatryan *et al.*, 2010):

Ուսումնասիրված մերկացումը գտնվում է Սարինար գետի վերին հոսանքի ավազանում, գետի աջ ափին: Այս ներկայացված է դիաբազներով ռադիոլարիտներով՝ մոտ 40 մ և տուֆիտներով, որոնք կտրվածքում հերթափոխում են ռադիոլարիտներին: Մասնավորապես, Սարինարի հովտում կրաքարերի վրա է վրաշարժված օլիստոստրոմային հաստվածքը, որտեղ կոնտակտը սուրբերտիկալ է, ուղեկցված կողաշարժային էլեմենտով (Galoyan, 2008):

Տասնինագ նմուշ է ուսումնասիրվել սույն կտրվածքից:

3.1.3 Զկնագետի ավազան

Զկնագետի մերկացումը գտնվում է Աևանա լճի հյուսիս-արևելյան համանուն գետի միջին հոսանքում: Ուսումնասիրված տեղամասում ռադիոլարիտները մերկանում են փորդիկ ելքերով (Նկ. 3): Առկա են նաև կանաչավուն պերիդոտիտներ, երևում են հանքայնացման հետքեր:



Նկ. 2 Զկնագետի մերկացման պարզեցված գծապատկերը (Danelian et al., 2011)

3.1.4 Գեղամասարի և Դարանակի մերկացումներ

Գեղամասարի մերկացումը գտնվում է համանուն գյուղից արևելք: Ռադիոլարիտները հանդիպում են սալիշտային լավաների հետ: Ուսումնասիրվել է ռադիոլարիտների երեք նմուշներ:


Դասընթացի մերկացումը գտնվում է Դարանակի հովտում, համանուն զյուղի հարևանությամբ, որտեղ ռադիոլարիտները հանդես են զայխ դիաբազայի խոշոր զանգվածների հետ:

3.2 Վեղու օֆիոլիթային զոնա:

3.2.1 Մերկացում (ա)՝ «Վերին» մերկացում

Ուսումնասիրվել են երկու մերկացումներ Վեղու օֆիոլիթային զոնայում՝ Վեղի գետի վերին և Մանկուկ գետի միջին հոսանքի ավազաններում:

Մերկացումներից մեկը պայմանականորեն անվանվել է «Վերին» մերկացում, որը գտնվում է Վեղի գետի հունիք աջ ափին, Կտրուկ շրջադարձի մասում (N 39 056. 767', E 450 0.628'): Ուսումնասիրությունների արդյունքում առանձնացվել են ռադիոլարիտների տեսանելի երեք շերտեր (կամ ոսպելյակներ՝ սուրվերտիկալ անկմամբ, մոտ 4 մ, 2 մ և 3 մ հզորություններով (Նկ. 3): Մերկացման արևելյան հատվածում լավաներն ունեն վարիոլիտային կառուցվածք և ծածկված են թափվածքներով:



Նկ. 3 Վեղի գետի վերին հոսանքի մերկացման (Ա) և նմուշարկման գծապատկերը

3.2.2 Մերկացում (բ)՝ «ստորին» մերկացում

Վեղու օֆիոլիթային զոնայում ուսումնասիրված հաջորդ մերկացումը գտնվում է դարձյալ Վեղի գետի վերին հոսանքում, նախորդ կտրվածքից դեպի հարավ-

արևմուտք (N 56 62 24', E 44 59 359'): Հիմնական տեկտոնական միավորն այստեղ Մանկուկի անտիկլինալին է, որի միջուկում, կարրոնատա-հրաբխածին ֆորմացիաներում, նախկինում նկարագրվել են կելովեյ-բերիասի ռադիոլարիաների կենսահամալիրներ (Եղօս և ար., 1991): Նմուշարկված ռադիոլարիտները ակալա-լամպրոֆիրային կազմի դիատրեմայի (Сатиан և ար., 2005, Սաակյան, 2007) եկզոկոնտակտից են:

3.3 Ռադիոլարիաների ուսումնասիրության մեթոդիկան և տեխնիկան

Բրածո ռադիոլարիաների ուսումնասիրությունը սկսվում է կայծքարային ապարներում ռադիոլարիաների հայտնաբերմամբ, որից հետո նմուշները ենթարկվում են լաբորատոր մշակումների:

Նմուշարկում: Նմուշարկումը կատարվել է միկրոֆաունայի ուսումնասիրության համընդհանուր մեթոդով: Նմուշարկվել են ուսումնասիրվող մերկացումում կայծքարային ապարների բոլոր շերտերը՝ ըստ շերտայնության, յուրաքանչյուր շերտի սկզբնամասից և վերջնամասից (ռադիոլարիտները սովորաբար դիագենետիկ փուլից հետո խիստ սեղմվում են և չափերով կրճատվում, ուստի յորանց տեսանելիորեն անզամ բարակ շերտերը կարող են ժամանակագրական առումով մեծ միջակայքերի պատկանել), կամ յուրաքանչյուր 0,5-1 մ միջակայքում: Նմուշները համարակալվել են, կտրվածքի սինեմատիկ պարկերի վրա նշվել է յուրաքանչյուր նմուշի տեղը՝ հետազոտմ ստացված արդյունքների վերլուծության համար:

Լաբորատոր ուսումնասիրություններ: Ռադիոլարիաների լաբորատոր ուսումնասիրությունը կատարվել է մի քանի փուլերով. ապարի մեխանիկական և քիմիական մշակում, ապա ռադիոլարիաների տարանջատում քիմիկուլյարի օգնությամբ և ուսումնասիրություն սկանացնող էլեկտրոնային միկրոսկոպների միջոցով:

Կիրառվել է քիմիական մշակման ֆոտորազրածնական մեթոդ՝ ապարները քայլայելու և բրածո ռադիոլարիաները դրանցից տարանջատելու նպատակով, որը թեև խիստ վտանգավոր, սակայն ներկայում կիրառվող ամենաարդյունավետ մեթոդն է համեստանում: Ապարները քայլայվել են ֆոտորազրածնական թթվի 4 %-ոց

լուծույթով, այնուհետև կատարվել է մնացորդների մի քանի հաջորդական լվացում՝ ջրի թույլ շիթով: Ֆառուսայի մնացորդները հավաքվել են երկու տարբեր խոշորացման մաղերի միջոցով (հիմնականում 53 և 150 μ): Կատարվել է ֆիլտրում և մնացորդի չորացում (քնական եղանակով): Ռադիոլարիաների տարանջատումը և սխեմայի կազմումը (նմուշների նախապատրաստումը ՍԷՄ ուսումնասիրությունների համար) կատարվել է բինոկուլյարի օգնությամբ: Նախքան սկանացնող էլեկտրոնային միկրոսկոպով ուսումնասիրությունը, նմուշները պատվել են ոսկու (կամ ոսկու և ածխի) ծածկույթով, համապատասխան սարքավորման միջոցով՝ ռադիոլարիաների մակենացյալին անդրադարձելիությունը մեծացնելու համար (առարկայի հնարավորինս իրականին մոտ պատկերը ստանալու համար):

Ուսումնասիրությունը և լուսանկարների ստացումը կատարվել է նախ HITACHI TM-1000 սկանացնող էլեկտրոնային միկրոսկոպով, մի քանի հարյուր կամ հազար անգամ խոշորացմամբ, ապա լավագույն ձևերը բազմակի դիտարկվել և նկարվել են ZEISS SUPRA 55VP ՍԷՄ-ի միջոցով՝ տարբեր դիրքերից և ավելի բարձրորակ նկարներ ստանալու համար:

Ռադիոլարիաների սեռերի և տեսակների որոշումը կատարվել է ըստ ռադիոլարիաների մեծ խոշորացմամբ ուսումնասիրությունների, լուսանկարների և համապատասխան գրականության՝ նախկինում հայտնի տեսակների հետ համամատության միջոցով (De Wever, 1982 vol.-I, II; Baumgartner *et al.*, 1995; Beccaro, 2006; JUD, 1994; Dumitrica *et al.*, 1997; O'Dogherty *et al.*, 2006; 2009 և այլն):

Գլուխ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԱԴԻՈԼԱՐԻԱՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԱՏԻԿԱՆ

Այս գլխում ընդգրկված են Հայաստանի օֆիոլիթային գոտիներում (Սևանի և Վեդու) կայծքարային ապարներում հեղինակի կողմից որոշված ռադիոլարիաները, այբբենական կարգով՝ ըստ սեռերի և տեսակների: Բերված է առաջին անգամ տեսակի որոշման տարեթիվը, տեսակը հայտնաբերող հեղինակի անունը, ներկայացուցիչ տեսակը, տարածման միջակայքը՝ ըստ ընդունված երկրաժամանակագրական սանդղակի, մեծամասամբ համաձայնեցված Steffensի ռադիոլարիաների ունիտար գոնալ բաժանման հետ (BAUMGARTNER *et al.*, 1995): Տրված է նաև որոշված տեսակների սինոնիմների որոշակի բանակություն և

համապատասխան գրականություն (համապատասխան տեսակների նկարագրություններով), որոնց հետ կատարված համեմատությունների միջոցով կատարվել են որոշումները, ինչպես նաև բաց նույնականությառով տրված ձևերի համառոտ նկարագրությունները: Որոշված տեսակների մեծ խոշորացմամբ (500 և ավելի անգամ) լուսանկարները համապատասխան մասշտաբով քերված են հավելվածում:

Գլուխ 5. ՌԱԴԻՈԼԱՐԻԱՆԵՐԻ ԿԵՆՍԱՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս բաժնում քերվում են ուր մերկացումներից ուսումնասիրված նմուշներում որոշված ուղղողարիաների բնորոշ տեսակների և կենսաշերտագրական կարևոր նշանակություն ունեցող (հստակ շերտագրական տարածման միջակայք ունեցող) ռադիոլարիաների գոնալ սինեմաները և դրանց կենսաշերտագրական վերլուծությունները:

5.1 Սևակի օֆիոլիթային զոնա

5.1.1 Դալիի մերկացում

Նշված մերկացումից ուսումնասիրվել են ռադիոլարիտների երկու նմուշներ (Dali-1 և Dali-2), առանձնացվել են երկու կենսազոննաներ վերին տիտոն-քերրիասի և քերրիաս-վերին վալանժինի: Ռադիոլարիաները բազմազան են, պահպանվածությունը միջին է, որոշված տեսակների չափերը տատանվում են 120-600 μ սահմաններում, խոշոր՝ 300-400 μ չափեր ունեցող Nasselaria-ների, առավելապես *Archaeodictyonitra*, *Acanthocircus*, *Dicerosaturnalis*, *Pantanellium*, *Podocapsa*, *Pseudodictyonitra*, *Sethocapsa* սեռերին պատկանող ռադիոլարիաների գերակշռությամբ:

Dali-1 նմուշի ուսումնասիրության արդյունքում որոշվել է ռադիոլարիաների վերին տիտոն-քերրիասի կենսահամալիրը: Ռադիոլարիաների տարածման ժամանակագրական սահմանները հիմնականում որոշվել են համաձայն 1995 թ. ընդունված գոնալ բաժանումների (Baumgartner et al. 1995): Որոշված ռադիոլարիաներն են *Angulobrachia* (?) *portmanni* *portmanni* Baumgartner, *Archaeodictyonitra apiarium* Rüst, *A. excellens* Tan, *Becus* sp., *Cinguloturritis cylindra* Kemkin et Rudenko, *Dicerosaturnalis dicranacantos* Squinabol, *D. trizonalis trizonalis* Rüst, *Emiluvia*

chica decussata Steiger, *E. pessagnoi multipora* Steiger, *Emiluvia* sp., *Higumastra* sp., *Napora* sp., *Obesacapsula bullata* Steiger, *O. cetia* Foreman, *Pantanellium squinaboli* Tan, *Podobursa quadriaculata* Steiger, *Podobursa* sp., *Podocapsa amphitreptera* Foreman, *Praecaneta longa*, *Pseudodictyomitra carpatica* Lozyniak, *Pseudodictyomitra* sp. cf. *P. primitiva* Matsuoka et Yao, *Pyramispongia barmsteiensis* Steiger, *Quarticella hunzikeri* O'Dogherty, Gorican et Dumitrica, *Rhopalosyringium* sp., *Ristola cretacea* Baumgartner, *Svinitzium depressum* Baumgartner, *S. pseudopuga*, *Syringocapsa longitibus*, *S. vicetina* Squinabol, *Tethysetta boesii* gr. Parona, *Thamarla* sp. cf. *T. braweri*, *Thanarla* sp. cf. *T. praeveneta*, *Triactoma tithonianum* Rüst, *Tritrabs evingi* s.l., *Xitus spicularius*, *Zhamoidellum* sp. cf. *Z. ovum* Dumitrica և այլն: Ստորին սահմանը հիմնավորվում է *Angulobracchia ? portmani portmani*, *Emiluvia chica decussata*, *Obesacapsula bullata*, *Pyramispongia barmsteiensis*, *Obesacapsula cetia*, *Syringocapsa longitibus*, *Syringocapsa vicetina*, *Svinitzium depressum*, *Svinitzium pseudopuga* տեսակների համեմ զարդ և վերին սահմանը որոշվում է *Emiluvia pessagnoi multipora* տեսակի անհետացմամբ:

Dali-2 նմուշի ուսումնասիրության արդյունքում առանձնացվել է վերին կիմերից վերին վալանժինի կենսահամալիրը: Որոշված տեսակներն են *Alievium helenae*, *Archaeodictyomitra apiarium*, *Archaeodictyomitra* sp. cf. *A. cellulata*, *Cyrtocapsa* sp., *Dicerosaturnalis dicranacantos*, *Emiluvia* sp. cf. *E. chica decussata*, *Emiluvia* sp. cf. *E. pessagnoi multipora*, *Pantanellium squinaboli*, *Parahsuum carpaticum*, *Podobursa* sp. cf. *P. quadriaculata* Steiger, *Podocapsa amphitreptera*, *Pseudodictyomitra* sp. cf. *P. carpatica*, *Pseudodictyomitra* ? *lilyae*, *Stichocapsa ulivii*, *Svinitzium mizutani*, *Tethysetta boesii* gr., *Tethysetta* sp. cf. *T. usotanensis*, *Triactoma* sp., *Triversus japonicus*, *Xitus* sp. cf. *X. spicularius*, *Zhamoidellum* sp. cf. *Z. ovum* տեսակներ: Ստորին սահմանը հիմնավորվում է *Dicerosaturnalis trizonalis dicranacantos* և *Pantanellium squinaboli*, *Tethysetta boesii* gr. տեսակների համեմ զարդ և վերին սահմանը որոշվում *Diserosaturnalis dicranacanthos* տեսակի անհետացմամբ:

5.1.2 Զորաշենի (Ձի) մերկացում

Ուսումնասիրված Djil06-03 նմուշում որոշված ուղղիոլարիաները բավականին լավ են պահպանված: Ըստ որոշված ուղղիոլարիաների բիոզոնալ սխեմայի (Baumgartner et. al., 1995), ներփակող ապարները վերին տիտոն-վերին վալանժինի հասակի են, որն համապատասխանում է 13-17 բիոզոնային (U.A.Z. 13-17), ինչպես և

հարակից մերկացման Dali-2 նմուշի ուսումնասիրության արդյունքում: Որոշված ռադիոլարիաներն են *Archaeodictyonitria cellulata*, *A. excellent*, *A. longovata*, *Dicerosatralis trizonalis dicranacantos*, *Dictyomitra sp.*, *Emilia chia decussata*, *Hemicryptocapsa capita*, *Holocryptocanum barbui*, *Mirifusus chenodes*, *M. diana minor*, *Obesacapsula cetia*, *Pantanellium squatinaboli*, *Parvingula cosmoconica*, *Podobursa quadriaculata aff.*, *Praecaneta cosmoconica*, *Pseudodictyonitria carpatica*, *Pseudoeucyrtis sp. cf. P. acus* JUD, *Sethocapsa sp. cf. S. kaminogoensis*, *Sethocapsa sp. cf. S. kitoi*, *S. uterulus*, *Sethocapsa sp. cf. S. zweilii* JUD, *Svinitzium columnum*, *S. pseudopuga*, *S. depressum*, *Syringocapsa visetina*, *Tethysetta boesii* gr., *T. columnna*, *Tethysetta sp. cf. T. usotanensis*, *Tethysetta sp. cf. T. mashitaensis*, *Thanarla boessii*, *Thanarla sp. cf. T. conica*, *Thanarla sp. cf. T. pulchera*, *Xitus sp. cf. X. gifuensis* և *Xitus sp.* և այլն:

Ստորին սահմանը որոշվում է *Emilia chia decussata*, *Holocryptocanum barbui*, *Sethocapsa kaminogoensis*, *Svinitzium depressum*, *Svinitzium columnum*, *Svinitzium pseudopuga* և *Syringocapsa visetina* տեսակների ի հայտ գալով և *Dicerosatralis trizonalis dicranacantos*, *Obesacapsula cetia*, *Syringocapsa visetina* տեսակների անհետացմամբ:

5.1.3. Սարինարի մերկացում

Ուսումնասիրված 15 նմուշներից լաբորատոր մշակումների աղյունքում հնարավոր է եղել որոշումներ կատարվել ռադիոլարիտների միայն երեք նմուշներում՝ Sar-5, Sar-10, Sar-14: Գերակշռում են հատկապես *Archaeodictyonitria*, *Dictyomitra*, *Parvingula* սեռերի ներկայացուցիչները:

Առաջին անգամ որոշվել է վերին բայոս-ստորին բաթի հասակի ռադիոլարիաների կենսահամալիր Սևան-Հազարու օֆիոլիֆային գոտու Սևանի հատվածում: Ի տարբերություն Վեղիում հայտնաբերված համանման տեսակների, այս մերկացումում հայտնաբերված ռադիոլարիաները ավելի վատ են պահպանված, բազմազանությամբ բավականին տարբերվում են նախորդներից՝ ներկայացված են տվյալ միջակայքին բնորոշ սահմանափակ տեսակներով, որով և պայմանավորված հասակային սահմանները դեռ ճշգրտվում են (աղյուսակ-1):

ԱՐՅՈՒԹԱԿ 1:

Sar-05, Sar-10, Sar-14 և մուշում որոշված շերտագրական կարևորագույն նշանակություն ունեցող ուղիղարիաները ըստ ընդունված ունիտար գոնաների:

Տեսակներ	Նմուշներ	Sar-05	Sar-10	Sar-14	U.A.Z.
<i>Archaeodictyonitra apiarium</i> (Rüst, 1885)	P	-	-	8-22	
<i>Archaeodictyonitra</i> sp.cf. <i>A. excellens</i> (Tan, 1927)	P	-	-	-	
<i>Loopus</i> (?) sp.	-	P	-	-	
<i>Cinguloturris carpatica</i> Dumitrica in Dumitrica and Mello, 1982	-	?	-	-	
<i>Cryptamphorela clivosa</i> (Aliev)	?	-	-	-	
<i>Dictyomitra pseudoscalaris</i> (Tan 1927)	?	-	-	-	
" <i>Dictyomitrella</i> " <i>kamoensis</i> Mizutani and Kido, 1983	?	-	-	-	
<i>Eucyrtidiellum</i> sp.cf. <i>E. unumaense</i> (Yao, 1979)	-	P	-	-	
<i>Hexasaturnalis minor</i> Baumgartner (<i>sensu</i> Dumitrica and D.-Jud 2005)	-	P	-	3-11	
<i>Paricingula vegiae</i> (Grill and Kozur, 1986)	-	P	-		
<i>Protunuma japonicus</i> Matsuoka and Yao, 1985	-	P	-	7-12	
" <i>Stethocapsa</i> " (?) <i>orca</i> Foreman, 1975	P	-	-	19-22	
<i>Hiscocapsa uterculus</i> (Parona, 1890)	P	-	-	11-22	
<i>Hiscocapsa lugeoni</i> O'Dogherty, Gorican and Dumitrica in O'Dogherty et al. 2005	-	P	-	-	
<i>Pseudoxitus</i> (?) sp.	P	-	-	-	
<i>Spongocapsula</i> sp.cf. <i>S. palmerae</i> Pessagno, 1977	-	-	P	-	
" <i>Stichocapsa</i> " <i>robusta</i> Matsuoka, 1984	-	-	?	5-7	
" <i>Stichomitra</i> " (?) <i>matsuokai</i> Hull, 1997	-	P			
<i>Striatocaponocapsa plicarum</i> (Yao, 1979) s.l. (<i>sensu</i> Baumgartner et al. 1995a)	-	-	P	3-8	
<i>Tethysetta boesii</i> (Parona, 1890)	P	-	-	9-22	
<i>Tethysetta dhimenaensis dhimenaensis</i> Baumgartner 1984	-	P	-	-	
<i>Thanarla brouweri</i> (Tan, 1924)	P	-	-	-	
<i>Thanarla</i> sp.cf. <i>T. pulchra</i> (Squinabol, 1904)	P	-	-	-	
<i>Transhsum brevicostatum</i> (Ozvoldova, 1975) gr.	-	?	-	-	
" <i>Tricolocapsa</i> ," sp. M in Baumgartner et al., 1995a	-	-	P	5-5	
<i>Zhamoidellum ovum</i> Dumitrica, 1970	-	P	-	9-11	
<i>Zhamoidellum ventricosum</i> Dumitrica, 1970	-	P	-	8-11	
U.A.Z.	11-22	7-8	5	-	

Նմուշ Sar-05 որոշվել է վերին վալանժին-ստորին ապսի հասակի ռադիոլարների կենսահամալիր՝ ներկայացված “*Sethocapsa*” (?) *orca*, *Tethysetta boesii* and *Hiscocapsa uterculus* տեսակներով: Վերջին երկու տեսակները համապատասխանում են ստորին ապսի *Verbeekia*-ի ենթագնուային (U.A.Z. 5)՝ ըստ (O'Dogherty, 1994). Նմուշ Sar-10-ում որոշվել է վերին բարձրաստորին օբսֆորդի հասակի ռադիոլարիաների կենսահամալիր (U.A.Z. 7-8), որը հիմնավորվում է հատկապն *Zhamoidellum ventricosum* և *Protuniuma japonicus* տեսակների առկայությամբ: Հայտնաբերված որոշ տեսակների (*Zhamoidellum ovatum* և այլն) ժամանակային տարածման միջակայքը դեռ ճշգրտվում է:

Sar-14-ը կորեկցվում է միջին յուրայի՝ վերին բայոս-ստորին բարձր հարկի հետ, որն համապատասխանում է հինգերորդ բիոզոնային (U.A.Z. 5) համաձայն “*Tricolocapsa*” sp. M տեսակի զոնալ տարածման: Որոշվել են նաև “*Stichocapsa*” *robusta* (U.A.Z. 5-7) և ? *Striatojaponocapsa plicarum* (Yao) տեսակները:

5.1.4 Զկնագետի մերկացում

Այս մերկացումից ուսումնասիրված նմուշներում (Sevan-1 և Sevan-4) հայտնաբերվել են լավ պահպանված, խոշոր (մեծամասամբ 250-300μ), բազմատեսակ ռադիոլարիաների երկու կենսահամալիրներ՝ ստորին կավճի հասակի: Sevan-1 նմուշում որոշված ռադիոլարիաների կենսահամալիրը ներկայացված է *Acaeniotyle diaphorogona* gr., *Archaeodictyonitra excellens*, *A. mitra*, *A. pseudomulticostata*, *Archaeospongoprinum patricki*, *A. elegans*, *Crucella lipmanae*, *Hemicriptocapsa capita*, *Mictyoditra* ? *curtava*, *Mirifusus* sp. cf. *M. diana minor*, *Orbiculiforma* sp., *Obesacapsula cetia*, *Pantannelium squinaboli*, *Parvingula* sp. cf. *P. longa*, *Podocapsa amphitrepta*, *Sethocapsa kaminogoensis*, *S. uterculus*, *Spongocapsula* sp., *Tethisetta usotaensis*, *T. boesii* gr., *Trirabs ewingi*, *Svinitzium* (?) *depressum*, *S. puga*, *Valupus japonicus*, *Xitus* sp., *Zhamoidellum testatum* տեսակներով՝ վերին տիտոն-վալանժինի հասակի (U.A.Z. 13-17): Այն հաստատվում է: *Archaeospongoprinum patricki*-ի ի հայտ գալրվ և *Diserosaturnalis trizonalis dicranacanthos* և *Obesacapsula cetia* տեսակների անհետացմամբ:

Sevan-4 նմուշում որոշվել են *Aurisaturnalis carinatus perforates*, *Diceraturnalis dicranacanthos*, *Archaeodictyonitra* (?) *lacrimula*, *Archaeodictyonitra excellens*, *Dictyonitra*

